ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 27.02.2019թ.
ժ. 11[30]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետի տեղակալ՝ գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ)
ՀՀ ԶՈՒ ՍՎ ԶՏԾ հաշվառման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Կ. Ավետիսյան
ՀՀ ԶՈՒ ՍՎ ԶՏԾ ԶՏԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Է. Թովմասյան
Բացակայում է
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ ՀՀՍ, ԶՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Չախալյան
Գնումների համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Վ. Սահակյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Վ. Սահակյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2018թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Սիլվեր Գրուպ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Սիլվեր Գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում և տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես 21.02.2019թ. «Սիլվեր Գրուպ» ՍՊԸ-ին էլեկտրոնային ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է որոկավորումը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ, սահմանված ժամկետում «Սիլվեր Գրուպ» ՍՊԸ-ն ընդհանրապես չի պահանջվող փաստաթղթերը: Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացրած գնահատման թերթիկները և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը 28.02.2019թ. մերժել է «Սիլվեր Գրուպ» ՍՊԸ-ի հայտը: «Սիլվեր Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Յունիքիմ» ՍՊԸ-ն:

1.2 Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական բյուջեի եկամուտների նոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային

պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2018թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Յունիքիմ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 11.03.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Յունիքիմ» ՍՊԸ համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում և տեխնիկական բնութագրերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում բացակայում է գնվող առարկայի արտադրման տարեթիվը և նշված չէ փաթեթավորման մասին տեղեկությունը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Յունիքիմ» ՍՊԸ-ն շտկել է վերոնշված անհամապատասխանությունները, գնահատող հանձաժողովը որոշեց մասնակցի որակավորման փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխան:

1.4 Մասնակցի որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 13.03.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Յունիքիմ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից՝-ին չափաբաժնում Յունիքիմ» ՍՊԸ-ին:

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Վ. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՖՁ վարչության նրատերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳՀԱՊ)		Տ. Մաթևոսյան
Գնահատող		Կ. Ավետիսյան
Գնահատող		Է. Թովմասյան
Գնումների համակարգող՝		Վ. Սահակյան